ՀՈԳԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԿԱՉԻ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԵՎ ԽԸՆԴՐԵՑ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ։

— Մեր ժողովուրդը իր պատմության ամենաճակատագրական ժամանակահատվածում անգամ չի մոռացել իր հոգևոր արժեքների մասին։ «Ճանաչել գիմաստություն և գխրատ, իմանալ գբանս հանճարոյ». այս կարգախոսն է ուղեկից եղել մեզ մշտապես և այսօր էլ։

— Այո, մենք եզակի ազգ ենք որպես անցյալապաշտ և թերևս այդ հանգամանքն է պատճառը, որ հաճախ անտեսում ենք ներկան։

Հայաստանի պետականությունից դուրս մի փոքր Հայաստան է Արցախը։ Արցախ, Ղարաբաղ, ընդհանրապես սա աշխարհագրական անուն է։ Սա էլ Հայաստանի մի փոքր կտորն է, մի ժողովրդի փոքր հատվածը։ Ամենաուժգին հարվածը մենք ստանում էինք հոգևոր ազգային մշակույթի ոտնահարումից, ինչպես ասում են յոթ փականքի տակ էր արցախցու ազգային մշակույթի զարգացումը։ Մենք հոգևոր մշակույթի քաղց ենք զգում։ Տասնամյակների ընթացքում գունդուկծիկ դարձած մեր պահանջների հանդեպ աչք են փակել, միտումնավոր խոչընդոտել, կասեցրել մշակութային կյանքի առաջընթացը։ Եվ ես կասեմ, որ այդ խոսքի վրա ծավալվեց, նոր թափ ստացավ արցախյան շարժումը, որ կար, վաղուց էր սկիզբ առել և ապրում էր մեր լեռնաշխարհի յուրաքանչյուր մարդու հոգում ապասելով բարի ու արդար ժամանակի։

Այո, ղարաբաղյան շարժումը հոգու պահանջ է։ Դրա համար էլ պետք է սիրտ ու հոգի ունենալ, որպեսզի կարողանալ հասկանալ արցախցուն։

— Աշխարհին է հայտնի Արցախի մշակույթը, հայն ու Հայաստանը օտարին ներկայացել է նաև այդ հատվածի հարուստ պատմությամբ։ Ի՞նչ պատահեց հանկարծ, ինչո՞ւ խաթարվեց այդ փառահեղ ընթացքը։ Վերջին տասնամյակներին այստեղ գրեթե ոչ մի մշակողթի օջախ չի ավելացել։ Ինչո՞ւ։

— Այո։ Նախահեղափոխական Արցախի կենտրոնը՝ Շուշին հանդիսացել է Անդրկովկասի հայկական լուսավորության առաջատար կենտրոններից մեկը։ Այստեղ դասակզքին 20 հանդես է լույս տեսել, որից 19-ը միայն հայերեն։ Կար չորս տպարան։ Մինչև 1920 թվի մարտը, մինչև հրդեհվելը Շուշիում գործել է Խանդամիրյանի աշխարհահանաչ թատրոնը, ուր հանդես են եկել ժամանակի բոլոր նշանավոր դերասանները։

Անցյալից չեմ ուզում օրինակներ բերել։ 65 տարիների Արցախի մշակույթի զարգացումը խաթարեց «ստալինյան ինտերնացիոնալիզմը»։ Այնքան էին ծափահարում այդ կեղծ ինտերնացիոնալիզմի լոզունգներին, որ ազատ ձեռք չէր լինում մշակույթի օջախներ կառուցելու, գրադարան, ակումբ կառուցելու... Ծափահարում էին։ Ժամանակ չկար։

Այսօր մարզկենտրոնը չունի մշակույթի տուն, տիպային գոնե մի գրադարան։ Բոլոր գրադարաններն էլ նկուղներում, անհարմարավետ շենքերում են։ Մշակութային օջախներ չէին կառուցում, որովհետև հանրապետությունը չէր պլանավորում։ Դեռևս 1968 թվականին պլանավորված էր Ստեփանակերտում կառուցել մշակույթի պալատ։ Հնգամյակից հնգամյակ պլանավորում են, մի հնգամյակից փոխանցում մյուս հընգամյակը, իսկ մարզի հարևան քաղաքներում մեկի փոխարեն երկու-երկու մշակույթի պալատներ կան, Նորաձև, շքեղ։ Խորթ զավակը կարո՞ղ է հարազատ զավակի նման հավասար խնամվի։ Երբ՞ք։ Մենք էլ ուզում ենք մեր հարազատ մոր հետ լինել։ Մենք էլ ենք ուզում մայրական փաղաքշանք։

Ինչ վերաբերում է զարգացման ընթացքին, ապա ես կարող եմ ասել, որ վերջին 65 տարում ոչ մի ընթացք էլ չի եղել։ Ընդհակառակը, քայքայվել են մեր գյուղերը։ Գյուղերը տեղափոխվել են քաղաքներ, քաղաքները դարձել գյուղեր, իսկ մեր գյուղերը վերացրել։ Ցորաքանչյուր պետություն ուժեղ է գյուղով։ Իսկ մենք գյուղեր չունենք։ Ասել է թե...

— Գուցե մենք ժամանակը արդյունավետ օգտագործել չգիտենք։ Բայց չէ՞ որ մշտապես պիտի հիշենք, որ այս պարագայում ամեն մի ժամվա ու օրվա կորուստ մեզ մի քայլ հետ է մղում մեր նպատակի իրագործումից։

— Ժամանակը արդյունավետ օգտագործել լավ գիտենք։ Բայց այդ ժամանակը օգտագործելու համար եթե չկան բազա, նյութատեխնիկական հնարավորություններ, ինչպես պետք է օգտագործել ժամանակը, ջուր ծեծելո՞վ։ Եվ ահա 70 տարի է Հակոբ Պարոնյանի ասած «Հառաջ պոռալով, հետ-հետ կնահանջենք...»։

Այսօր Արցախ աշխարհը չունի իր առաջվա փառքը, մեր տաղանդավոր, լավագույն մասնագետները, արվեստի, գրականության փայլուն դեմքերը։ Նրանք ցրվել են երկրով մեկ։ Արցախը նրանց համար շատ նեղ էր, որովհետև Արցախում զարգանալու համար չկան հնարավորություններ, միտումնավոր փակում էին արցախցի տաղանդների զարգացման դարպասները։ Ասում ենք ամեն լավը մեր մանուկներին։ 70 հազարանոց մեր քաղաքում կա մեկ երաժշտական դպրոց, այն էլ՝ տեղավորված մի հին, ոչ տիպային, վթարային շենքում, իսկ արվեստի մանկական դպրոցը՝ նախկին քաղխորհրդի շենքում, զուրկ է տարրական պայմաններից։ Երիտասարդությունը իր հանգիստը անցկացնելու համար չունի ժամանակակից ոչ մի բար, սրճարան, պարասրահ...

Մենք ոչ թե մի քայլ, տասնյակ մղոններով ենք հետ մընում սովորական առաջընթացից։

Եթե մենք լինենք մեր եկրամասի տերն ու տնօրենը, ըստ մեր արցախցիների շնորհքի, ես գիտեմ, համոզված եմ, որ շատ-շատերից առաջ կլինենք, իսկ դժբախտաբար 65 տարում մենք միայն հետ ենք նահանջել։ Հենց այս բանի գիտակցմամբ էլ այսօր ղարաբաղյան շարժման առաջին գծում երիտասարդությունն է քայլում, շարժման դրոշակակիրը Արցախի խիզախ երիտասարդությունն է։

— Ավելի քան երբևէ այսօր Հայաստանի հետ հոգևոր կապը կենսական անհրաժեշտություն է։ Ինչպե՞ս է իրագործվում այդ խնդիրը։

— Հայաստանի հետ միշտ էլ անհրաժեշտ է եղել կենսական կապը։ Այսօր Արցախում ստեղծված վիճակում քիչ մեղք չունեն մայր Հայաստանի մտավորականությունը, արվեստի և գրականության մեծ առաջատար ուժերը, ստեղծագործական կոլեկտիվները։ Նրանք իրենց «ճվիրում են» արտասահմանյան ուղևորությունների, իսկ Արցախը մոռացել էին, մոռացել էին Հայաստանից դուրս այս փոքր Հայաստանը։ Եթե պատահում էր տարեկան մեկ կամ երկու գեղարվեստական կոլեկտիվ այցելում էին Արցախ, մեկ կամ երկու համերգով հանդես գալիս մարզկենտրոնում կամ ինչ-որ շրջկենտրոնում... ու շտապ վերադառնում Երևան։ Իսկ գյո՞ղը։ Գյուղի շինականը մնում էր ադրբեջանի ռադիոյի հաղորդումների «ամա՜ն... ամանի՜» գերի դարձած։ Իսկ մեր հայկական արվեստը, երգը-պարը մոռացվեց ու մոռացվեց։ Ո՞վ է դրա համար մեղավորը... Սկսվեց ղարաբաղյան շարժումը, այն հասավ Երևան, դուրս եկավ Թատերական հրապարակ։ Թատերական հրապարակը զարթնեցրեց ամբողջ հայությանը։ Եթե չլիներ Թատերական հրապարակը, ով է իմանում, ինչ կլիներ... Այսօր հազիվ թե այս զրույցը լիներ։

Այս տարվա մարտի սկզբներին Հայաստանի ստեղծագործական կոլեկտիվների հետ հանդիպումներ ունեցանք։ Պատրաստվեցին, խոստացան, օ՜, խոստումների ինչպիսի հեղեղ։ Բայց անցել է ավելի քան չորս ամիս, դեռ այդ հեղեղներից մի կաթիլ չի ընկել Արցախում։

Գիտեք, մեր էս փոքր Հայաստանի հայերը շատ են կարոտել մեծ Հայաստանին, նրա մարդկանց, նրանց ձայնին, մենք նրանց հետ մեծ հույսեր ենք կապում։ Տարիներ շարունակ արգելված էին մեր հանդիպումները, իսկ ինչքան արգելում էին, այնքան քաղցրանում էր մայր Հայաստանը։ Հիմա կարծես չեն արգելում, բայց էլի չենք հանդիպում։ Լավ է, հեռուստատեսությունը սկսել է Երևանի հաղորդումները ցույց տալ, գոնե հեռուստատեսությամբ մեկ-մեկ տեսնում ենք մեր արվեստի վարպետներին, երգիչներին, գրողներին... Հետաքրքիր է, ինչո՞ւ չեն ուզում նրանք գալ Ղարաբաղ, մեր ժողովրդի հետ հանդիպել։ Մի քանիսի հետ այդ մասին Երևանում խոսել եմ, ասում են «ապասանի է» հիմա գալը։ Ինչո՞ւ։ Իսկ եթե իրոք վաղը «ապասանի» լինի, էն ժամանակ կարող է Հայաստանի՞ց էլ փախչեն։

— Ունե՞ք կոնկրետ օրինակ, որ Հայաստանի այս կամ այն ձեռնարկում իրագործված լինի, խոսքը վերաբերում է կոլտուրայի բնագավառին։

— Շատ։ Մենք շատ շնորհակալ ենք Գորիսի շրջանային կուլտուրայի բաժնից, Ագիզբեկովի շրջանային գրադարանի, Երևանի Խնկո Ապոր հանրապետական մանկական գրադարանի կոլեկտիվներից։ Իրոք, նրանք այնքա՜ն հայկական գեղարվեստական գրականություն են մեզ ուղարկել, որ այդ պրոբլեմը լուծված է մեր գրադարաններում։ Թույլ տվեք ձեր թերթի միջոցով շնորհակալություն հայտնել այդ լավ, բարի մարդկանց։ Բայց Հայրենիքի ղեկավարությունից շատ դժգոհ ենք։ Բազմիցս գրավոր և բանավոր խնդրել ենք թեկուզ և փոքր, ազգագրական, էստրադային համերգային խմբեր ուղարկել Արցախի շրջանները, գյուղերը... խոստանում են, բայց չեն ուղարկում։ Նույնը կարելի է ասել Հայաստանի կինեմատոգրաֆիայի կոմիտեի ընկերների մասին՝ խոստանում են և շուտ մոռանում...

Զրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ